«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

27 ապրիլի, 2026 թ. N 30 - Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ «ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի հոդված 28-ի 1-ին կետը, հոդված 30-ը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.17.25 կետը, Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգի 8.7 կետը, ինչպես նաև Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի 22.04.2026թ. N 13 արձանագրությունը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ (ՀԳԳՀ 1 20 0353) 2026թ. ապրիլի 22-ի որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքում տալ 2 «երկու» գնահատական և որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ սահմանել նախազգուշացում:

2. Հանձնարարել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ գործողությունների ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրել Պալատի գործադիր տնօրինությանը:

3. Հանձնարարել Պալատի գործադիր տնօրինությանը արտաքին գնահատման գլխավոր վերահսկողի մասնակցությամբ իրականացնել արձանագրված խախտումների և թերությունների շտկման մշտադիտարկում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրվանից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**